



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2021 թվականի թիվ 76-Ա

ք. Երևան

«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի ապրիլի 23-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 11 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատոր «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի ապրիլի 23-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի ապրիլի 23-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում 2021 թվականի ապրիլի 26-ին Հանձնաժողով մուտքագրված գրավոր բացատրությունում ցանցային օպերատորը հայտնել է, որ 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը 2021 թվականի մարտի 29-ին Հանձնաժողով ուղարկել են թղթային տարբերակով, սակայն Հանձնաժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 23-ի վարչական վարույթի հարուցման ծանուցումից պարզել են, որ իրենց կողմից փոստային ծառայության միջոցով ուղարկված հասույթի վերաբերյալ տեղեկությունը Հանձնաժողով չի հասել:

Ցանցային օպերատորի կողմից գրավոր բացատրությանը կից կրկին ներկայացվել է 2021 թվականի մարտի 29-ի գրությունը (2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը), իսկ ավելի ուշ, 2021 թվականի ապրիլի 30-ին նշվածի

համար որպես ապացույց ներկայացվել է նաև 2021 թվականի մարտի 29-ին հասույթի վերաբերյալ տեղեկությունը Հանձնաժողով ուղարկելու փաստը հավաստող փոստային ծառայության առաքման փաստաթուղթը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» թիվ ՀՕ-395-Ն օրենքն ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին, որը պաշտոնական հրապարակումների միասնական կայքում (arlis.am) հրապարակվել է 2020 թվականի օգոստոսի 6-ին և Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին: Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիածառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա: Ուստի, Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիածառայություն մատուցողների և օպերատորների համար, այս վարչական վարույթի շրջանակում՝ «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՅԵՆ» ՍՊ ընկերության համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հաշվի առնելով, որ Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին և տեսալսողական մեդիայի ոլորտում սահմանվել են նոր կարգավորումներ, ուստի, Հանձնաժողովը, և՛ 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 05-475, և՛ 2021 թվականի մարտի 12-ի թիվ 05-230 գրություններով ցանցային օպերատորին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ դրույթի մասին և թիվ 05-230 գրությամբ առաջարկել է Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, ապացույցները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորը 2021 թվականի մարտի 29-ին իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունն ուղարկել է Հանձնաժողով փոստային ծառայության միջոցով, սակայն Հանձնաժողովը այն չի ստացել:

Փաստում ենք նաև, որ ցանցային օպերատորի կողմից վարչական վարույթի շրջանակներում ներկայացված ապացույցներով հաստատվում է այն փաստը, որ ցանցային օպերատորի կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունն Օրենքով սահմանված ժամկետում ուղարկվել է Հանձնաժողով (ուղարկվել է 2021 թվականի մարտի 29-ին փոստային ծառայության առաքմամբ), սակայն հասույթի վերաբերյալ տեղեկությունը Հանձնաժողովը չի ստացել:

Վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ ցանցային օպերատորի կողմից վարչական վարույթի շրջանակներում ներկայացված բացատրությունները, պարզաբանումները, ինչպես նաև ապացույցները հիմնավոր և բավարար են, իրավախախտման փաստը բացառելու համար, քանի որ ցանցային օպերատորի կողմից պահանջվող տեղեկատվությունն ուղարկվել է Օրենքով սահմանված ժամկետում և միայն փոստային ծառայության պատճառով Հանձնաժողովն այն չի ստացել, իսկ վարչական վարույթի հարուցումից հետո ցանցային օպերատորի կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը 2021 թվականի ապրիլի 26-ին կրկին Հանձնաժողով ներկայացնելու փաստը բավարար հիմք է ցանցային օպերատորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Այսպիսով, Հանձնաժողովը հաշվի առնելով, որ ցանցային օպերատորի կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունն Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողովը չի ստացել ոչ թե ցանցային օպերատորի մեղքով, այլ փոստային ծառայության, ուստի վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքներն, ամրագրում է, որ ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 11 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՅԵՐ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 11 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՅԵՐ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱԿՈԲՅԱՆ

27 մայիսի 2021թ.

ք. Երևան

S.